ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Վենետո շրջանի

/Իտալիայի Հանրապետություն/

և

Արմավիրի մարզի

/Հայաստանի Հանրապետություն/

միջև

Սույն համաձայնագիրը, որն ուղղված է խթանելու Վենետոյի շրջանի /Իտալիայի Հանրապետություն/ և Արմավիրի մարզի /Հայաստանի Հանրապետություն/, /այսուհետ՝ 'Կողմեր' / բարեկամական և համագործակցության հարաբերությունները՝ համագործակցության լայն շրջանակով հարաբերությունները ամրացնելու և փոխադարձ զարգացմանը նպաստելու նպատակով, սահմանում է հետևյալը.

1.Համաձայն Իտալիայի Հանրապետության և Վենետոյի շրջանի օրենքներով սահմանված դրույթների /մասնավորապես թիվ 131/2003 օրենքի 6 հոդվածի 2 կետի/, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Արմավիրի մարզի օրենսդրության, և հետևելով միջազգային պարտավորություններին և այն պարտավորություններին, որոնք ստանձնել է Իտալիան Եվրոմիության առջև, Կողմերը պարտավորվում են ծավալելու փոխադարձ զարգացման համար անհրաժեշտ գործողություններ և ընդլայնել համագործակցությունը փոխադարձ շահավետ ոլորտներում:

2.Կողմերը կխթանեն փոխադարձ հարաբերությունները, որպեսզի ստեղծեն ավելի ամուր կապեր իրենց միջև, հետազոտական և կրթական հաստատությունների, համալսարանների միջև, հարգելով նրանց անկախությունը, տնտեսական կազմակերպությունների միջև՝ նպաստելով տարբեր ոլորտներում փոխանակումներին, որոնց մեջ պետական կառավարման, առևտրի և տնտեսության, գիտության և տեխնոլոգիայի, առողջապահական համակարգի, գյուղատնտեսության և անտառատնտեսության, զբոսաշրջության, սպորտի, կրթության և վերապատրաստման ոլորտները, ինչպես նաև մշակույթային և շրջակա միջավայրի հարստության արժևորման ոլորտները: Ձեռնարկությունների միջև համագործակցության աջակցությանն ուղղված գործողությունները կիրականացվեն համաձայն համապատասխան Զարգացման Ազգային Պլանների դրույթների, իսկ Վենետոյի շրջանի համար՝ համաձայն իր սեփական իրավասությունների և համապատասխանեցնելով կենտրոնական մարմինների կողմից սահմանված ծրագրային ուղղություններին:

3.Կողմերը կհամագործակցեն առևտրի և ներդրումների վերաբերյալ

տեղեկություններ փոխանակելու և առևտրային պատվիրակությունների և տնտեսվարողների այցերի փոխանակման ընդլայնման նպատակով:

4.Կողմերը պարտավորվում են ընդլայնել սեփական պատվիրակությունների մասնակցությունը տոնավաճառների և միջոցառումների համապատասխան տարածքներում, այդ մասին նախնական տեղեկատվություն փոխանակելով:

5.Կողմերը պետք է կարողանան հավաքվել տարին մեկ անգամ, երկու երկրներում ըստ ռոտացիայի՝ համագործակցության գործողությունները զարգացնելու նպատակով: Համապատասխան Արտաքին Գործերի Նախարարությունները և Իտալական և Հայկական տարածքային իրավասու դիվանագիտական ներկայացուցչությունները կտեղեկացվեն սույն համաձայնագրի իրականացման հետ կապված գործողությունների վերաբերյալ:

6.Կողմերը պարտավորվում են իրենց համապատասխան նորմատիվների շրջանակներում աջակցել սույն համաձայնագրի կիրառման համար նախատեսված գործողություններին կամ սեփական միջոցներով, կամ Եվրոմիության ծրագրերի շրջանակներում կամ այլ միջազգային ֆինանսական աղբյուրների կողմից հատկացվող ներդրումների միջոցով, առանց նոր կամ խոշոր պարտավորություններ առաջացնելու Իտալական և Հայկական պետությունների համար:

7.Նախնական փոխադարձ համաձայնությամբ, իսկ իտալական կողմի համար նաև հետևելով թիվ 131/2003 օրենքի 6 հոդվածի 2 կետի դրույթներին, կողմերը կկարողանան ուղղումներ մտցնել սույն համաձայնագրի մեջ, որոնք կկազմեն վերջինիս անբաժանելի մասը և կանցնեն նույն գործընթացները, որոնք սահմանված են սույն համաձայնագիրը հաստատելու համար:

8.Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահին, բացառությամբ կողմերի կողմից հնարավոր նորմատիվային ձևակերպումների, որոնց մասին համապատասխանաբար կտեղեկացվեն: Համաձայնագիրը ստորագրվում է հինգ տարի ժամկետով, թարմացվում է ևս հինգ տարով, եթե կողմերից որևէ մեկը չի որոշի լուծել համաձայնագիրը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով նախատեսված հնգամյակի ավարտից առնվազն վեց ամիս առաջ:

Կազմվել է Վենետիկում 19.02.2018, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը իտալերեն և հայերեն լեզուներով, երկու տեքստն էլ ունեն հավասար իրավաբանական ուժ:

Վենետոյի շրջանի անունից (Իտալիայի Հանրապետություն) Նախագահ Լուկա Զայա	Արմավիրի մարզի անունից (Հայաստանի Հանրապետություն) Մարզպետ Աշոտ Ղահրամանյան

INTESA

per l'amicizia e la collaborazione

tra

la Regione del Veneto

(Repubblica Italiana)

e

la Regione di Armavir

(Repubblica di Armenia)

La presente Intesa, volta a promuovere i rapporti di amicizia e collaborazione tra la Regione del Veneto (Repubblica Italiana) e la Regione di Armavir (Repubblica di Armenia) (di seguito denominate "Parti") al fine di rafforzare i rapporti e favorire lo sviluppo reciproco attraverso un'ampia attività di collaborazione, stabilisce quanto segue:

1. Le Parti, in conformità a quanto disposto dalle leggi della Repubblica Italiana (in particolare la legge n. 131/2003, articolo 6, comma 2) e della Regione del Veneto, nonché dalle leggi della Repubblica di Armenia e della Regione di Armavir, e nel rispetto degli obblighi internazionali e di quelli che derivano all'Italia dall'appartenenza all'Unione Europea, si impegnano a promuovere le azioni necessarie allo sviluppo reciproco e ad intensificare la collaborazione nei settori di reciproco interesse.

2. Le Parti promuoveranno i reciproci rapporti, al fine di creare legami più solidi tra di loro, tra istituzioni di ricerca ed istruzione, università, nel rispetto della loro autonomia, organizzazioni economiche, per favorire azioni di interscambio in vari settori tra cui quello dell'amministrazione pubblica, del commercio e dell'economia, della scienza e tecnologia, del sistema sanitario, dell'agricoltura e selvicoltura, del turismo, dello sport, della formazione ed istruzione, nonché della valorizzazione dei beni culturali e ambientali. Le attività finalizzate al sostegno delle azioni di collaborazione tra le imprese saranno attuate in conformità a quanto disposto dai rispettivi Piani Nazionali di Promozione e, per la Regione del Veneto, nell'ambito delle proprie competenze e compatibilmente con gli indirizzi programmatici stabiliti a livello centrale.

3. Le Parti collaboreranno al fine di scambiarsi informazioni su commercio e investimenti e promuovere scambi di visite di delegazioni commerciali e di operatori del mondo economico.

4. Le Parti si impegnano a promuovere la partecipazione da parte di proprie delegazioni a fiere e manifestazioni nei rispettivi territori, dandone anticipata comunicazione.

5. Le Parti si potranno riunire annualmente, a rotazione nei due Paesi, allo scopo di promuovere le azioni di collaborazione. I rispettivi Ministeri degli Affari Esteri e le Rappresentanze Diplomatiche Italiane e Armene territorialmente competenti saranno informate in merito alle azioni di attuazione della presente Intesa.

6. Le Parti si impegnano, nell'ambito delle loro rispettive normative, a sostenere le attività previste in applicazione della presente Intesa sia attraverso fondi propri sia mediante contributi che si rendano disponibili nell'ambito della programmazione dell'Unione Europea e di altre fonti di finanziamento internazionali, senza generare nuovi o maggiori oneri per lo Stato Italiano.

7. Le Parti previo mutuo consenso – e da parte italiana in osservanza di quanto disposto all'articolo 6, comma 2, della legge n. 131/2003 – potranno introdurre emendamenti alla presente Intesa, che costituiranno parte integrante della medesima e seguiranno procedure analoghe a quelle adottate per l'approvazione della presente Intesa.

8. La presente Intesa acquista efficacia alla data della sua firma, salvo eventuali adempimenti previsti dalle normative delle Parti, che saranno opportunamente comunicati. L'intesa ha una durata di cinque anni, tacitamente rinnovati per altri cinque anni, qualora nessuna delle Parti decida di risolvere l'Intesa per iscritto almeno sei mesi prima della scadenza quinquennale prevista.

Fatto a Venezia il 19.02.2018 in due originali, ciascuno nelle lingue italiana e armena, entrambi i testi facenti ugualmente fede.

Per la
Regione del Veneto
(Repubblica Italiana)
Il Presidente
Luca Zaia

Per la
Regione di Armavir
(Repubblica di Armenia)
Il Governatore
Ashot Ghahramanyan